ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/23

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Լուսակերտ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով բաց մրցույթ, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1424-2020 գրությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.02.2020թ.-ի թիվ ՊՆ/02/316-2020 գրության հիման վրա, 05.02.2020թ.-ին «Լուսակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 06.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 13.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 13.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.03.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.02.2020թ.-ի թիվ ՊՆ/02/316-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով ընթացակարգում «Լուսակերտ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից (այսուհետ՝ Մասնակից): Սահմանված կարգով Մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն Մասնակիցն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել: Հանձնաժողովը Մասնակցին ծանուցել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սակայն Մասնակցի կողմից կրկին փաստաթղթեր չի ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Լուսակերտ» ՍՊԸ հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Լուսակերտ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Լուսակերտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.02.2019թ.-ին գրությամբ դիմել է «Լուսակերտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1424-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/23 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 29.10.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լուսակերտ» ՍՊԸ-ն:

«Լուսակերտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Նույն հայտարարությամբ Մասնակիցը հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով սույն դիմում- հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի

(ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.12.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 28-րդ չափաբաժնի մասով «Լուսակերտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովի քարտուղարը 30.12.2019թ.-ին ծանուցել է Մասնակցին է հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 28-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Լուսակերտ» ՍՊԸ-ն: Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 16.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԲՄԱՊՅԲ-20-7/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ի, քանի որ Մասնակցի կողմից հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացէ կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 21.01.2020թ.-ին ծանուցել է Մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված

անհամապատասխանությունները շտկելու մասին, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.01.2020թ.-ին ծանուցում է ուղարկվել Մասնակցին:

«Լուսակերտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, կրկին ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել, ուստի 30.01.2020թ.-ին Հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը մերժվել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1424-2020 գրությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի

պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, որի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող: Մասնակիցը նաև պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված

հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ,կամ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 29.10.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լուսակերտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Նույն հայտարարությամբ Մասնակիցը հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/6» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով սույն դիմում- հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող

ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 10.12.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 28-րդ չափաբաժնի մասով «Լուսակերտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, ինչով պայմանավորված որոշվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 16.01.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԲՄԱՊՅԲ-20-7/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ի, քանի որ Մասնակցի կողմից հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացէ կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 21.01.2020թ.-ին ծանուցել է Մասնակցին՝ ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին, ինչի վերաբերյալ Հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.01.2020թ.-ին ծանուցում է ուղարկվել Մասնակցին:

Սակայն «Լուսակերտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, կրկին ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել, ուստի 30.01.2020թ.-ին Հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտը մերժվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, ինչպես նաև առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լուսակերտ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1424-2020 գրությամբ «Լուսակերտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/23 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Լուսակերտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**